| | | | | |
|---|---|---|---|---|
| 26 | Յակոբ վարդապետ գիտնական վարժապետ Մէյսարու վանից. | 1644 | — | Ըստ աւանդութեան Մէյսարեցւոց. |
| 27 | Ոսկան վարդապետ շինող տանեաց տաճարին. . . . . . | 1655 | ռճդ. | Ըստ արձանագրութեան. |
| 28 | Կիրակոս վարդապետ շինող սեղանոյն և նորոգող տաճարին . . | 1657 | ռճզ. | Ըստ արձանագրութեան. |
| 29 | Թովմայ եպիսկոպոս Տաթևացի . . . . . | 1660 | — | Ըստ Առաքել պատմագրի՝ խա. որ ասէ, «Թովմայ եպիսկոպոս Տաթևու, որ գնաց յերկիրն Շամախու հովուել և առաջնորդել ժողովրդեան՝ աշխարհին»: |
| 30 | Սահակ եպիսկոպոս Շամախեցի . . . | 1664 | ռճժգ. | Որոյ գերեզմանն մնայ 'ի ներքոյ տաճարի Սաղիանի վանից. |
| 31 | Սողոմոն եպիսկոպոս անձրևաբեր . . . | 1667 | ռճժզ. | Ըստ աւանդութեան. |
| 32 | Բարսեղ եպիսկոպոս | 1668 | ռճժէ. | Ըստ յիշատակարանի ձեռագիր աւետարանին Սաղիանի վանից: |
| 33 | Անտոն վարդապետ | 1676 | ռճիե. | Ըստ արձանագրի Մէյսարու վանից. |
| 34 | Իգնատիոս վարդապետ Վաղարշապատցի. . | 1681 | ռճլ. | Ըստ արձ. տապանին. |
| 35 | Երեմիա եպիսկոպոս | 1686 | ռճլե. | Ըստ արձանագրութեան Մէյսարու վանից. |
| 36 | Վլաս վարդապետ Շամախեցի շինող անտեսատան Սաղիանի վանից . . . . . . | 1688 | ռճլը. | Ըստ արձ. Մէյսարու վանից, որոյ գերեզմանն մնայ 'ի ներքոյ Տաճարին Սաղիանի վանից. |